ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2011 թվականի N 15-Ա

ԲԱԲԿԵՆ ԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԻՍԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 96 ՀՈՂԱՄԱՍՆ ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՏԻՍԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 98 ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերի՝ Աբովյանի քաղաքային համայնքի ավագանին *որոշում է*

1. Համաձայնություն տալ Բաբկեն Ալոյանին սեփականության իրավունքով պատկանող (2010 թվականի դեկտեմբերի 17-ի N 2738578 վկայական) Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի 2-րդ թաղամասում գտնվող 535.55 քառակուսի մետր մակերեսով թիվ 96 հողամասի փոխանակմանը Աբովյանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող (2010 թվականի օգոստոսի 30-ի N 2743597 վկայական) Հատիսի փողոցի 2-րդ թաղամասում գտնվող 557.71 քառակուսի մետր մակերեսով թիվ 98 հողամասի հետ:
2. Բաբկեն Ալոյանը պարտավոր է վճարել հավելյալ հողամասի կադաստրային արժեքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՂԱՄ	ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ	ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ	ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ	ՄԱՐԳԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻՄԱԿ	ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՓԱՆՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ	

Դեմ -0
Ձեռնպահ -0

Քաղաքապետ Կ. Գուլոյան

2011 թ. մարտի 10
ք. Աբովյան